

«15\_»\_\_02\_\_ 202 թ No \_\_436\_\_

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ  
ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2129-Ն որոշմամբ հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը և իմունականխարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը» պետական ծրագիրը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության իմունականխարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական հանձնաժողովի» առաջարկությունը (2021 թվականի հունվարի 15-ի նիստի արձանագրություն), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- 1) Հաստատել.
- 1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների ռիսկի խմբերը՝ համաձայն հավելվածի:
- 2) Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐ  
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ  
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ**

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների դիսկի խմբերն են.

- 1) Տարեց անձանց սոցիալական պաշտպանության հաստատությունների բնակիչներ և աշխատակիցներ, այլ սոցիալական պաշտպանության հաստատությունների աշխատակիցներ,
- 2) Բուժաշխատողներ՝ բժիշկներ, միջին բուժաշխատողներ, կրտսեր բուժաշխատողներ

**(կետր խմբ. 28.04.21 N 1489-Ա)**

- 3) 65 տարեկան և բարձր տարիքի անձինք՝ սկսելով 80 տարեկան և բարձր տարիքի անձանցից,
- 4) 16-64 տարեկան քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, մասնավորապես. շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, քրոնիկ սրտային անբավարարություն, քրոնիկ երիկամային հիվանդություններ, լյարդի քրոնիկ հիվանդություններ՝ քրոնիկ հեպատիտներ, քրոնիկ լյարդային անբավարարություն, նյարդային համակարգի քրոնիկ հիվանդություններ՝ Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած, համակարգային աուտոիմուն հիվանդություններ, շաքարային դիաբետ ունեցող, ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք, ինչպես նաև ըստ առանձին պատվաստանյութերի վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների և Առողջապահության նախարարի հրամանով հաստատված առանձին պատվաստանյութերի կիրառման ուղեցույցների:

**(կետր խմբ. 28.04.21 N 1489-Ա)**

- 5) Դասախոսներ, ուսուցիչներ,
- 6) Արտակարգ իրավիճակների նախարարության աշատակիցներ,

- 7) Զինձառայողներ,
- 8) Արդարադատության ոլորտի աշխատակիցներ, կալանավորված անձինք և դատապարտյալներ,
- 9) Հանրային տրանսպորտի ոլորտի աշխատակիցներ,
- 10) Պետական ծառայողներ:

**(Հավելվածը խմբ. 22.04.21 N 1390-Ա)**